<<Նոր ժամանակի կրթություն>> ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

<<Գրաճանաչության կազմակերպման առանձնահատկությունները>>

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Նարինե Պետրոսյան

Ուսումնական հաստատություն՝

Երևանի հ.191 հիմնական դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Բովանդակություն _____ 2

Ներածություն_____ 3

Գլուխ 1

Գրաճանաչության մեթոդները հայ դպրոցում _____ 4

1.1 Գրաճանաչության ժամանակակից մեթոդները _____ 4

Գլուխ 2

Գրաճանաչության կազմակերպման գործընթացին

ներկայացվող մանկավարժական մեթոդները _____ 7

Գլուխ 3

Ձախլիկությունը և դրա բացահայտման անհրաժեշտությունը

գրուսուցման ընթացքում _____ 14

Եզրակացություն _____ 16

Օգտագործված գրականության ցանկ _____ 17

Ներածություն

Մեր ժամանակներում կարևորվում է 5-6 տարեկան դպրոցական ուսուցմանը նախա-պատրաստելու հարցը: 5-6 տարեկան երեխաներին դպրոցական ուսուցմանը ժամանակին նախապատրաստելը նպաստում է նրանց մեջ ուսումնական աշխատանքի նկատմամբ սեր և հետաքրքրություն դաստիարակելուն, անհամեմատ հեշտացնում է մանկապարտեզային կյանքից անցումը դպրոցական կյանքին, ուսումնառությունը: Ապահովվում է նաև կրթութ-յան երկու աստիճանների՝ նախադպրոցական և դպրոցական տարրական ուսուցման միջև եղած անհրաժեշտ հաջողությանը:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է վաղ ուսուցման ծրագրային նոր պահանջներով և գրաճանաչության կազմակերպման գործընթացը ճիշտիրականացման կարևորությամբ:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել հայոց լեզվի գրաճանաչության պատմության մեջ գոյություն ունեցող փորձն ու զարգացման ընթացքը. վաղ գրաչանաչությունը, որպես երեխաներին դպրոցին նախապատրաստելու միջոց:

Աշխատանքի նպատակից բխում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝

1. ուսումնասիրել գրաճանաչության կազմակերպման գործընթացի առանձնահատ-կությունները դպրոցում.
2. Ուսումնասիրել հետազոտվող թեման գիտամեթոդական գրականության մեջ և գործնականում:

Գլուխ 1. Գրաճանաչության ուսուցում

Հայերեն գրերի գյուտից մինչև այժմ ընկած երկարատև ժամանակաշրջանում հայ դպրոցում գրաճանաչության ուսուցման բազմաթիվ ու բազմապիսի մեթոդներ են գոր-ծադրվել:

Այդ մեթոդների հաճախակի փոփոխման նպատակն է եղել հեշտացնել կարդալու և գրելու ուսուցման պրոցեսը, որն այսօր էլ մանկավարժների գլխավոր խնդիրն է: Գրաճանա-չության ուսուցման յուրաքանչյուր նոր մեթոդի հանդես գալը կապված է եղել ինչպես ման-կավարժական, հոգեբանական ու մեթոդական գիտությունների նոր նվաճումների, այնպես էլ յուրաքանչյուր կոնկրետ պատմական ժամանակաշրջանում դպրոցի առջև դրված նոր խնդիրների ու նպատակների հետ:

Հայ դպրոցն ունի գրաճանաչության մեթոդների հարուստ գանձարան, որը վկայում հայ ժողովրդի, հայ մտավորականների՝ մատաղ սերնդի կրթության, ասել է՝ մատաղ սերնդի կրթության, ասել է՝ ազգապահպանման նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի առկայությունը:

Այսօր ևս անընդհատ պրպտումներ են կատարվում գրաճանաչության արդյունավետ մեթոդների և դրանց իրականացման եղանակների մշակման ուղղությամբ:

Հայ դպրոցում գործադրված գրաճանաչության մեթոդներից շատերը կարճ կյանք են ունեցել, սակայն մի մասից առանձին տարրեր այսօր էլ դեռևս օգտագործվում են աշխարհի տարբեր անկյուններում ապրող հայ մանուկներին գրաճանաչ դարձնելու գործընթացում: Այս իմաստով գրաճանաչության պատմական մեթոդների իմացությունը կօգնի գրաճա-նաչության ժամանակակից մեթոդների ճիշտ գործածությանը:

1.1 Գրաճանաչության ժամանակակից մեթոդները

Այսօր հայ իրականության մեջ գործում են գրաճանաչության ժամանակակից վերլու-ծական-համադրական հնչյունավանկային և վերլուծական - համադրական հնչյունաբառային մեթոդները, որոնք կիրառվել են նաև ռուսական մեթոդիկայում և

հենվում են հայ համաշ-խարհային դպրոցի գրաճանաչության կազմակերպման պրակտիկայով արդարացված այլ մեթոդների առանձին տարրերի վրա:

Այս մեթոդները հայ դպրոցում գիտականորեն հիմնավորված ներդրեց պրոֆեսոր Ա. Տեր-Գրիգորյանը, որի ստեղծած այբբենարանները լուրջ քայլ էին հայայբբենարանագիտության

մեջ:

Այս մեթոդները կոչվում են վերլուծական-համադրական, որովհետև երկուսի դեպքում էլ հնչյունային վերլուծությունը նախորդում է համադրական փուլին, սակայն երկու փուլերը սերտորեն կապված են, որովհետև նոր հնչյունի ուսումնասիրությունն իրականանում է բառի շուրջ տարվող վերլուծական և համադրական աշխատանքի միջոցով. հնչյուն-տառի ուսուցումն սկսվում է բառի <<քայքայումից>> մինչև հնչյուն (վերլուծություն), այնուհետև բառի կազմի մեջմտնող բոլոր հնչյունները համաձուլվում են (համադրություն) բառն ամբող-ջական կարդալու համար: Հնչյուն-տառի ուսուցումն ընթանում է հնչյունից տառը գնացող ուղիով:

Վերլուծական-համադրական հնչյունավանկային և հնչյունաբառային մեթոդների առանձ-նահատկությունները:

Վերլուծական-համադրական հնչյունավանկային մեթոդն ստեղծվել է՝ հիմք ընդունելով անցյալում գործածվող մի շարք մեթոդներից ընտրված և պատմականորեն արդարացված բազմաթիվ տարրեր:

Այս մեթոդով երեխաներին գրաճանաչ դարձնելիս կարևորվում է բառի հնչյունային վեր-լուծությունը. <<Լեզվական վերլուծությունն իրականացվում է ամբողջից դեպի մասը և մասից դեպի ամբողջը տարվող հակադիր գործողություններով՝ պատմություն – նախադա-սություն – բառ - վանկ - հնչյուն և հակադարձ շղթայով>>, և կարդալու նվազագույն միավոր դիտվում է վանկը: Այսինքն՝ երեխաները կարդալ են սովորում վանկերով: Սակայն այդ չի նշանակում, որ վանկերով կարդալն ուղեկցում է երեխային ամբողջ գրաճանաչության ըն-թացքում, երբ աշակերտների մեջ ձևավորվել են նոր տառը բառի մեջ ճանաչելու, մնացած տառերի հետ ձուլելու և կարդալու կարողությունները, երեխաները կարդում են բառերով, որոնք ունեն վանկային կորեր: Այդ եղանակով կարդալիս աշակերտները

բառի մեջ տեսնում են դրանք, մտովի վերլուծում բառի վանկային կառույցը և սովորում են կարդալ՝ հիմք ընդու-նելով վանկը: Հետագայում մեկ տասնյակ հնչյուն - տառերի յուրացումից հետո , երեխաները սկսում են բառերով կարդալ:

Վերլուծական – համադրական հնչյունաբառային մեթոդի հիմնական առանձնահատ-կությունն այն է, որ գրաճանաչության ուսուցման ժամանակ որպես կարդալու ամենափոքր միավոր առաջադրվում է բառը: Սակայն սա չի նշանակում, որ երեխաներին գրաճանաչ դարձնելիս չի կարելի բառը վանկատել. Բազմավանկ բառերը կարդալու ուսուցման ժամա-նակ առաջարկվում է բառը բաժանել վանկերի՝ առանց խախտելու նրա ամբողջականութ-

յունը: Այս խնդրի լուծման ժամանակ իբրև մեթոդական հնար օգտագործվում են վանկատ-ման կորերը, որոնք տրվում են բառի տակ, կամ գծիկները, որոնք տրվում են վանկերի միջև:

Գլուխ 2. Գրաճանաչության կազմակերպման գործընթացին ներկայացվող մանկավարժական պահանջները

Գրաճանաչության ուսուցումը կազմակերպելիս պիտի հաշվի առնել ուսուցման մատչե-լիության, զննականության, հաջորդականության, պարզից դեպի բարդը, ծանոթից անծա-նոթը գնալու և անհատականության սկզբունքները՝ դասի ժամանակ կարևոր դեր տալով ինչպես դիդկտիկակա, այնպես էլ շարժուն խաղերին:

Գրաճանաչության ողջ գործընթացում պիտի պահպանել մանկավարժահոգեբանական մի քանի հիմնական պահանջներ.

1. Դասի որոշակի փուլերում ուսուցիչը պիտի երեխաներին բացատրի, թե իրենք ինչ պիտի անեն այդ պահին, իսկ աշխատանքի ավարտից հետո պիտի ամփոփի ինչ արեցին, ինչ սովորեցին:
2. Աշակերտներին տրվող առաջադրանքները, հարցերն ու բացատրությունները պետք է ձևակերպվեն հակիրճ, հստակ, հասկանալի բառերով և ոչ երկարաշունչ նախադա-սություններով:
3. Պիտի գերակշռեն համադասարանային փոքր խմբերով և զույգերով աշխատանք-ների կատարման նմուշները, բացատրի կատարման ընթացքը հագամանքորեն:

4. Կարդալու ուսուցման դասի ժամանակ երեխաները պիտի շատ կարդան, իսկ գրա-վորի դասին շատ գրեն (անշուշտ դադարներով):
5. Դասի ընթացքում անհրաժեշտ է մի քանի անգամ փոխել երեխաների գործունե-ության տեսակները (կարդալ – նկարել – գրել – երգել – խոսել – խաղալ և այլն):
6. Դիդակտիկ նյութերը , զննական պարագաները, ուսուցման տեխնիկական միջոց-ները, փոխգործուն մեթոդները, խաղային առաջադրանքները պիտի օգտագործվեն տեղին և այն չափով, որքանով որ կնպաստեն ուսուցման մատչելիությանն ու հետա-
   քրքրաշարժությանը՝ առանց աշակերտներին ծանրաբեռնելու և նրանց ուշադրու-թյունը դասի հիմնական նպատակից շեղելու:
7. Դասը պլանավորելիս անհրաժեշտ է ունենալ ինչպես ամբողջ դասարանի, այնպես էլ

8. յուրաքանչյուր աշակերտի պատրաստականությունը՝ կարևորելով ուսումնական նյութի յուրացումը յուրաքանչյուր սովորողի կողմից:
9. Աշխատել հնարավորության սահմաններում բացառել դիտողություններն ու պա-տիժները, նախընտրությունը տալ խրախուսանքին:
10. Ուսուցումը կազմակերպելիս ուսուցիչը պիտի նկատի ունենա, որ աշխատանքի արդյունավետությունը պայմանավորված է իր լեզվաբանական գիտելիքներով ու մանկավարժահոգեբանական հմտություններով և ձգտի մշտապես զբաղվել դրանց ձեռքբերմամբ և կատարելագործմամբ:
11. Ինչպես ուսումնական ցանկացած նյութի յուրացման, այնպես էլ գրաճանաչության գործընթացում ուսուցանվող նյութի նկատմամբ երեխայի դրսևորած հետաքրքրու-
թյունը ծնվում է այդ նյութը հասկանալու մակարդակից. որքան լավ է երեխան հաս-կանում նյութը, այնքան նրան այն հետաքրքրում է: Որքան հետաքրքրում է, այնքան երեխան շատ է ուզում իմանալ:

Գրաճանաչությունը սովորաբար կազմակերպվում է երեք շրջանով.

ա) նախաայբբենական շրջան

բ) այբբենական շրջան

գ) հետայբբենական շրջան:

Գրաճանաչության ուսուցման նախաայբբենական շրջան

Գրաճանաչության նախաայբբենական շրջանի պարապմունքները կառուցվում են՝ հաշվի առնելով դպրոց նոր ընդունված երեխաների տարիքային առանձնահատկությունները, մասնավորապեսուշադրության և հիշողության առանձնահատկությունները, երեխաները երկար ժամանակ չեն կարող լսել, զբաղվել միևնույն գործողությամբ, արագ հոգնում են և այլն: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է նրանց գործունեության ձևերը փոխել 10-15 րոպեն մեկ՝ դասի յուրաքանչյուր փուլում պարապմունքն իրականացնելով դասի ընդհանուր պլա-նին և նպատակին համապատասխան: Աշխատանքը դասի ժամանակ կազմակերպվում է այնպես, որ զրույցներն ու պատմություններն ընդհատվեն երեխաների ակտիվ գործունե-ությամբ, այդ թվում ֆիզիկական վարժություններով: Դասի ժամանակ նախատեսվում են հետաքրքրաշարժ և խաղային պահեր, հանելուկների գուշակում, հեքիաթների պատմում, դրանց բեմադրում, ազատ կամ թեմատիկ նկարչություն, երգ, պար, ռիթմիկա և այլն:

Գրաճանաչության այբբենական շրջան

Գրաճանաչության այբբենական շրջանի հիմնական խնդիրները.

- ուսուցանել հայերենի բոլոր հնչյուն – տառերը
- սովորեցնել ճիշտ համադրել հնչյուններն ու տառերը
- գործնականորեն յուրացնել վայելուչ գրելու կանոնները
- մշակել պարզ բնագիրը ամբողջական բառերով սահուն և հասկանալով կարդալու կարողություններ
- զարգացնել ընթերցանության նկատմաբ սեր և հետաքրքրություն
- ձևավորել ընթերցողական տարրական ունակություններ
- զարգացնել հայերեն խոսքն ու հայեցի մտածողությունը
- ձեռք բերել լեզվական նախնական գիտելիքներ
- իրականացնել ճանաչողական, դաստիարակչական, զարգացնող աշխատանքներ՝ նպաստելով երեխայի անձի ներդաշնակ զարգացմանը:

Հնչյուն-տառերի ուսուցման շղթան

Տառաճանաչության գործընթացի առաջին և կարևոր խնդիրը տվյալ տառի հնչյունի ընկալումն է: Այսինքն՝ ուսուցումը պիտի հնչյունից գնա դեպի տառը: Անծանոթ հնչյուն – տառը երեխային ընկալել տալու համար աշխատանքը պիտի սկսել խոսքի ամենամեծ մավորից՝ պատմությունից առանձնացնելով այն նախադասությունը, որի մեջ կա մեկ-նաբառը, ապա՝ նախադասությունից առանձնացնել մեկնաբառը: Սա այն բառն է, որը սկսվում է ուսուցանվող հնչյուն – տառով, որի վերլուծության ճանապարհով պիտի երե-խաներն ընկալեն անծանոթ հնչյունը; ճանաչեն նրա տառը: Այնուհետև պիտի գծվի մեկ-նաբառի հնչյունավանկային գծապատկերը, որոշվեն հնչյունները և մատնանշվի այն հնչյունի վանդակը, որը պիտի նոր ուսուցանվի: Այս խնդիրների հաջորդական իրականաց-ման համար նախ պատմություն է հյուսվում այբբենարանի յուրաքանչյուր նոր տառի
համար նախատեսված էջի թեմատիկ նկարի շուրջ: Պատմությունը, որը շարադրում է ուսուցիչը կամ աշակերտները ուսուցչի օգնությամբ, պիտի բավարարի որոշակի պահանջ-ների.

- կազմված լինի 3 – 4 նախադասությունից
- նախադասությունները պիտի լինեն պարզ կամ պարզ ընդարձակ (2 – 3 բառ)
- բոլոր բառերը հասկանալի լինեն երեխաներին (կամ անհրաժեշտության դեպքում բառապաշարի հարստացման նպատակով պարունակեն 1 – 2 անծանոթ բառ)
- անպայման օգտագործվեն բառեր, որոնցում հնչում է նոր ուսուցանվող հնչյունը
- օգտագործվի մեկնաբառը (շահեկան է, որ այն լինի միավանկ կամ պարզ բառ)
- նոր ուսուցանվող հնչյունը լսվի բառասկզբում:

Աշխատանքը նոր ուսուցանվող հնչյուն – տառի ուղղությամբ պիտի տարվի պատմություն – նախադասություն – բառ – վանկ – հնչյուն մեթոդական շղթայով:

Գրելու ուսուցումը այբբենական շրջանում

Գրաշանաչության այբբենական շրջանում հիմնականում լուծվում են հետևյալ խնդիր-ները.

- զարգացնել և ամրակայել գրենական պիտույքներից օգտվելու, տետրում կողմնորոշվելու երեխաների կարողությունները
- ամրացնել երեխաների ոսկրամկանային համակարգը (մատների մանր ֆալանգները, դաստակը, ողնաշարը, ուսերը, պարանոցը և այլն)
- մշակել տառապատկերներն ընկալելու և դրանք նախ տետրում տրված օրինակի
- համաձայն ամբողջական վերարտադրելու, ապա ինքնուրույն գրելու կարողություններ
- իրականացնել վայելչագրության կանոնների համապատասխան՝ վանկերի, բառերի, բառակազմությունների գրուսուցումը
- ձևավորել նախադասությունը հասկանալով արտագրելու և ինքնուրույն կազմածը հասկանալով գրի առնելու ունակություններ
- մշակել գրած բառերի, բառկապակցությունների, նախադասությունների իմաստը հասկանալու կարողություն
- մշակել գրության և արտասանության տարբերություն չունեցող բառերն արտա-գրելու, ինչպես նաև հնչյունատառային վերլուծությունից հետո ուսուցչի թելադրու-թյամբ դրանք գրի առնելու կարողություններ:

Գրուսուցման աշխատանքները մեթոդապես ճիշտ իրականացնելու համար պիտի նկատի ունենալ որ գրելու գործընթացն ունի երկու կողմ. Բովանդակիյին, որը վերաբերում է կա-տարվող գրավոր աշխատանքի բովանդակությունը և տեխնիկան, որն անմիջականորեն առնչվում է յուրաքանչյուր տառի գրաֆիկական պատկերին և նրա մյուս տառերի հետ ունե-ցած կապերին, բառերի և նախադասությունների ճիշտ գրությանը:

Երեխաների մեջ պիտի ձևավորել այն համոզմունքը, որ գեղեցիկ, ընթեռնելի ձեռագիրը իր գրածը ընթերցողի նկատմամբ հարգանքի դրսևորում է իսկ առաջին դասարանցու գրա-վորի առաջին ընթերցողն ուսուցիչն է: Սակայն ուսուցիչն էլ իր հերթին պիտի նրբանկատ-ություն և համբերատարություն հանդես բերի երեխաների ձեռագրի նկատմամբ նկատի ունենալով, որ.

- գրելը առաջին դասարանցու համար մտավոր գործունեության ամենաբարդ տեսակն է և սերտորեն կապված է երեխայի անհատականության հետ
- գրելու կարողությունը ձևավորվում է դանդաղ՝ երեխայից խլելով մտավոր, ֆիզիկական և հոգեկան մեծ ջանքեր:

Միաժամանակ չպետք է մառանալ, որ երեխայի ձեռագրով (ոչ թե վատ կամ լավ գրելը, այլ խեղաթյուրված տառերը, տողերի սահմանների, տառերի դիրքի ու չափի ընֆգծված խախ-տումները նայլն) կարելի է որոշել նրա հոգեկան գործընթացների զարգացման վիճակը. և եթե երկար ժամանակ երեխայի ձեռագրի ձևավորման ուղղությամբ ուսուցչի աշխատանքն արդյունք չի տալիս, նշանակում է՝ պիտի մտահոգվել և անպայման դիմել հոգեբան – մանկա- վարժի օգնությանը:

Երեխաներին գրել սովորեցնելու բոլոր փուլերում պիտի հիշել, որ գրուսուցման իրակա-նացման գործընթացը հենվում է ուսուցման որոշակի սզբունքների վրա զննականություն, գիտակցականություն, աստիճանակություն, երեխաների անհատական առանձնահատկու-թյունների հաշվառում, կարդալու և գրելու համատեղ ուսուցում և այլն:

Տառի գրուսուցման մեթոդական շղթան

Ձեռագիր տառերի ուսուցումը պետք է սկսել նրա հնչյունի գիտակցումից: հայերենի տա-ռերի հիմնական մասնիկները երեխաները գրել են սովորել գրաճանաչության նախա-այբբենական շրջանում: Ցանկացած տառի գրուսուցումից առաջ ուսուցիչը երեխաներին
ցույց է տալիս ձեռագիր տառերը, դրանք երեխաների հետ միասին համեմատում տպագիր

տառատեսակների հետ, որոշում են նմանություններն ու տարբերությունները և տեղադրում դասարանի համար տեսանելի տեղում: Այնուհետև ուսուցչուհին գրատախտակի վրա ցույց է տալիս այն մասնիկները, որոնցից կազմված է տվյալ տառը՝ անպայման շեշտելով, որ դրանք իրենց ծանոթ են և իրենք գիտեն այն գրել: Այս աշխատանքի միջոցով աշակերտները ծանոթանում են տառի հիմնական բաղադրամասերին, այսինքն կատարվում է տառապատկերի կամ տառի ձևի վերլուծություն.

1. տառապատկերի վերլուծություն ըստ երեխաներին ծանոթ մասնիկների
2. տառապատկերների վերլուծություն տառը գրելու ընթացքի՝ հաշվի տակ

3. տառապատկերի վերլուծություն համեմատելով այն երեխաներին ծանոթ տառերի հետ:

Այդպիսի վերլուծական աշխատանքներից հետո ուսուցիչը ցույց է տալիս երեխաներին արդեն ծանոթ մասնիկների միացման եղանակները և տառի ամբողջական գրության ձևը զուգահեռ բացատրություններ տալով տառի ձևավորման ընթացքի մասին (սկսում ենք տողի վրայից, բարձրանում ենք, թեքվում ենք աջ, իջնում ենք և այլն): Երկրորդ անգամ գրելիս ուսուցիչը հաշվում է հաշիվը հստակ կերպով համապատասխանեցնելով տառի յուրաքանչյուր մասնիկը գրելու գործողության հետ (մեկ՝ հասանք տողին, երկու՝ բարձրա-ցանք, երեք՝ իջանք) և այլն: հաշվի տակ գրելը օգնում է գրուսուցման գործընթացի կառա-վարմանը, ամբողջ դասարանի հետ միժամանակ աշխատելուն, գրելու անհրաժեշտ տեմպի պահպանմանը և վայելուչ ձեռագրի ձևավորմանը: տառի գրուսուցման ընթացքը նկարա-գրելիս անհրաժեշտ է հասկանալի և պարզ նախադասություններովնկարագրել ձեռքի շար-ժումները, բացատրել, թե տողի որ մասից է սկսվում տառի գրությունը, որտեղ է ավարտվում գործը, ինչպես և որքան է պետք թեքել: Կարևոր է , որ բացատրության ժամանակ յուրա-քանչյուր բառ երեխան հասկանա, ուսուցչի օգտագործած յուրաքանչյուր բառ որոշակի իմաստ արտահայտի:

Տառակազմությունն ամրակայելու նպատակով անհրաժեշտ է կատարել մի քանի վար-ժություն: Վարժությունների հաջորդականության պահպանումը կարևոր է, որովհետև այն ունի դիդակտիկական նշանակություն:

Վարժություն 1. <<Տառի գրուսուցում օդում>>

Ուսուցիչը մեջքով կանգնում է դեպի դասարանը աջ ուսով քիչ թեքված դեպի երեխաները (որպեսզի դիտի երեխաների ձեռքի շարժումները) : Երեխաներին հանձնարարում է բռնել գրիչներն այնպես, ինչպես բռնում են գրելիս, ձեռքը

բարձրացնել մինչև աչքերի բարձրութ-յան և նայելով ուսուցչի ձեռքի շարժումներին, ուսուցչի հետ միասին օդում գրել նոր ուսու-ցանվող տառը: Աուսուցչուհին օդում գրում է տառը՝ զուգահեռ բացատրություններ տալով և հաշվելով:

Վարժություն 2. <<Գրում ենք ավազի վրա>>

Երեխաների սեղանների անկյուններում դրված են ավազով լի փոքրիկ տուփեր: փոքրիկ փայտիկի ծայրով երեխաներն ավազի վրա գրում են նորածանոթ տառը: Ուսուցչուհին մեկ առ մեկ դիտում է երեխաների աշխատանքը և տալիս է ցուցումներ:

Գլուխ 3. Ձախլիկություն և դրա բացահայտման անհրաժեշտությունը գրուսուցման ընթացքում

Ձախլիկությունը վաղեմի պատմություն ունի: Հին ժամանակներում ձախ ձեռքով գրելը կամ որևէ գործողություն կատարելը կապում էին սատանայական ուժերի հետ: Հետագա-յում ձախլիկներին համարում էին հոգեկան հիվանդներ: Խորհրդային ժամանակաշրջա-նում ձախլիկությունը համարվում էր թերություն և ծնողներն ու ուսուցիչները ամեն կերպ ջանում էին իրենց փոքրիկներին աջլիկ դարձնել: Ձեռքի առաջատարությունը պայմանա-վորված է գլխուղեղի աջ և ձախ կիսագնդերի գործառույթների հատուկ՝ անհամաչափ տեղաբաշխ-մամբ: Ձախլիկությունը կապված է գենետիկայի հետ, որը ժառանգաբար փոխանցվում է սերնդեսերունդ: Ձեռքբերովի ձախլիկությունը կարող է առաջանալ ուղեղի վնասվածքի ժամանակ: Այս դեպքում ուղեղի առողջ կիսագունդը մասամբ կարող է իր վրա վերցնել վնաս-ված կիսագնդի գործառույթը:

Հոգեբանական հետազոտությունները ցույց են տվել, որ վերափոխելով երեխայի առա-ջատար ձեռքի գործողությունը, խախտվում է ուղեղի բնականոն ընթացքը: Դա էլ կարող է լուրջ վնաս հասցնել երեխայի առողջության զարգացմանը: մանկավարժները և ծնողները պետք է գիտակցեն, որ ձախլիկին վերափոխելը վնասում է երեխայի զարգացման բնակա-նոն գործընթացը:

Այսօր հոգեբանության, բժշկության և գիտության այլ ոլորտների բազմազան նվաճում-ների և առաջընթացի դարում մանկավարժի առջև խնդիր է դրվում առանձնահատուկ ուշադրություն դարձնել ձախլիկների, քանի որ նրանցից շատերը գրուսուցման շրջանում հանդիպում են մի շարք դժվարություններ:

Բնածին ձախլիկները ունեն մի շարք անհատական առանձնահատկություններ: Նրանք փոքր ինչ դանդաղաշարժ են և դանդաղ էլ մտածում են: հաշվի առնելով այս

հանգամանքը՝ պետք չէ երեխային շտապեցնել՝ հատկապես գրելու ժամանակ: Գրուսուցման ժամանակ ձախլիկ երեխան դժվարանում է արտագրություն կատարել և պահպանել համապատաս-խան արագություն: Այդ հմտությունը երեխայի մեջ պետք է ձևավորել աստիճանաբար:

Հաջորդ դժվարությունը երեխայի ձեռքի դիրքն է: Ձախլիկները սովորաբար երկու դիրքով էլ գրում են: Այս դեպքում պետք է ուշադրություն դարձնել ձեռքի թեքությանը և

հենաշարժողական համակարգին:

Աջ ձեռքով գրելիս լուսավորությունը պետք է ընկնի ձախից: Ձախով գրող երեխաների համար հնարավոր չէ ապահովել ճիշտ լուսավորություն: Ուստի խնդրին ճիշտ խնդրին ճիշտ մոտեցում տալու համար հարկավոր է ձախլիկներին նստեցնել պատուհանի մոտ:

Եզրակացություն

Աշխատանքի ուսումնասիրության արդյունքում հանգել եմ հետևյալ եզրակացությանը.

- Գրաճանաչության դասի գլխավոր նպատակը երեխային կարդալ սովորեցնելն է, որի համար անհրաժեշտ է տեսողական զգայարանն աշխատեցնել լսողական և խոսքաարտաբերական զգայարանների հետ համատեղ
- Ըստ գրաճանաչության մեթոդիկայի կարդալն ու գրելը պիտի միասին ուսուցանել: Կարդալը նպաստում է գրելու կարողության ձևավորմանը, իսկ գրելը՝ կարդալու
- Հնչյուն – տառերի ուսումնասիրման և յուրացման հաջորդականության ընտրությունն առաջին հերթին պայմանավորված է առաջին դասարանցիների համար հնչյունային վերլուծական – համադրական աշխատանքի ոչ միայն կարևորությամբ, այլև մատչելիությամբ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Տեր – Գրիգորյան <<Ուսուցումն առաջին դասարանում>>
2. Ջուլիետա Գյուլամիրյան <<Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա>>